ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՑԵԴԵՍԻԱՑԷՆ

Քոլերայի և տենդի մահաբեր հիւանդութեանց անցեալ տարի Եդեսիոյ և շրջակայից մէջ գործած սոսկալի աղէտներն արդէն առեն առեն հրատարակուած լինելով լրագրաց ոմանց մէջ՝ ցաւօք սրտի կարդացած և խմացած էինք. սակայն մօտ օրերս Եդեսիայէն նամակ մը ստանալով աւելի ցաւ և կսկիծ զգացինք տեղական հայ հասարակութեան կրած աղետից եւ տուած բազմաթիւ զոհերուն վերայ. զորս նամակագիրն այրած սրտիւ եւ դառն արտասուօք կը նկարագրէ։ Մի կողմէն քոլերայն, միւս կողմէն տենդն ղուր— հի—ննա փողոցէ 'ի փողոց եւ տնէ տուն արագ արագ ճարակելով սոսկալի նախճիրներ կը գործեն. մի կողմէն բժշկաց, նա մանաւանդ հմուտ և բարեբարոյ բժշկաց սովն, եւ միւս կողմէն գործոց անյաջողութեան պատճառաւ հասարակութեան կրած դըրամական տագնապը. այս ամենուն հետ միացած լինելով նաեւ զօշաքաղ և անխիղճ ոմանց իբր բժշկաց կեղեքումներն ու բարբարական ընթացքը փչտաց և աղետից վիհը կը գլորեն խեղճ և անտերունչ հայ հասարակութիւնը. այնպէս որ տուն չը կայ, կ'ըսէ նամակագիրն, ուր հիւանդ չը գտնուի. վայր չը կայ, ուրկից լալոց և ողբոց ձայներ չը լսուին. իսկ որ ամենէն ցաւագոյնն է, այնպիսի ընտանիքներ կը թուէ, որք մի կամ մի քանի աւուր մէջ 'ի հող տապանի հանգչած են բընակարաննին ամայի և թափուր թողլով իսպառ. որ եթէ ստոյգ է՝ արդարև խիստ ցաւալի է։ Այժմ թէեւ դադրած է, կ'ըսէ, այն սոսկալի կոտորածի սաստկութիւնը, սակայն նորա ձգած հետոյ դառնութեան ազդեցութիւնը դեռ կը կրէ խեղճ և տառապեալ ժողովուրդն, որոյ մասին այսպէս կը գըրէ նամակագիրն ճիշդ իւր բառերով “Իրաւ է որ քոլերայ ըսուած անագորոյն ախտը հեռացած է. բայց Եդեսիացին նորա դառնութեան բաժակէն քամած մրուրէն դեռ չէ սթափած, թողունք գործի անյաջողութիւնը որ համատարածապէս տարածուած է երկրիս վերայ”։

Արդարեւ ցաւալի և դառն են այս տեսակ լուրերն ամեն հայ սրտերու. նա մանաւանդ աւելի դառն և կսկծալի անոնց համար՝ որք ականատես եւ ենթակայ իսկ գտնուած են այս ամեն աղետից. ուստի մենք եւս ցաւակցելով պարոն նամակագրի եւ բոլոր հայ հասարակութեան կրած այն ամեն վըշտաց և տառապանաց, Հոգւոյն Սրբոյ մխիթարութիւնը և քաղցր սփոփանքը կը հայցեմք առ հասարակ ամենուն համար։

Պարոն նամակագիրն այս ամեն չարեաց վրայ ցաւ 'ի սիրտ ողբալէն զկնի մխիթարար լուր մը եւս կը հաղորդէ. տեղւոյն արքունի զօրաց բժիշկ Գերմանացի Ժօզէֆ անուն Մեծ. Տօքթորի հմտութեան, բարեսրտութեան և մարդասիրութեան մասին գովեստիւք խօսելով. որոյ թէ քրիստոնեայ և թէ թիւրք ժողովրդեան անխտիր ցոյց տըւած մարդասիրական խնամքն ու հոգատարութիւնը զինքը սիրելի ըրած են, կ'ըսէ, ամեն կարգի և աստիճանի ժողովրդոց. այնպէս որ գրեթէ տասն ամսոյ չափ առաջ երբ յիշեալն տէրութեան հրամանաւ արքունի զօրաց հետ Բերիա կ'երթայ բոլոր քաղաքացիները մեծ տրտմութեան մէջ թողլով, տեղւոյն Կուսակալն և ազգաց առաջնորդք բոլոր քաղաքացւոց կողմէն հեռագրաւ կը խնդրեն Բ. Դռնէն նորա վերադարձը, որոյ խնդիրը լսելի լինելով

digitised by A.R.A.R.@

Մեծ. Տօքթօրն տասը ամէն զինի կըրկին կը դառնայ յԵգեսիայ յուրախութիւն և 'ի սփոփանս բոլոր հասարակութեան:

Պարոն Նամակագիրն կը յաւելու եւս թէ, եթէ Պարոն Տօքթօրն վերայիշեալ հիւանդութեանց ժամանակ յԵգեսիայ գտնուէր անշուշտ աղքատըն այնքան չը պիտի տառապէր եւ կ'եղէքուէր, որոյ մասին տեղւոյն պատրիարքական փոխանորդ Արժ. Կարապետ Վարդապետն եւս վկայելով իւր ինքնագիր ստորագրութեամբ՝ կը խընդրէն հրատարակել ՄԻՕՆ ամսաթերթի մէջ այն վկայութիւնքը 'ի շնորհակալութիւն և յերախտագիտութիւն նորին անշահասէր և մարդասիրական բարեգործութեանց:

Ս. Գ. Ե.

ՅԻՍՈՒՍԻ ՎԵՐՋԻՆ ՇԱԲԱԹ

ԽԱՉԻ ՃԱՌ ԵՒ ԿՈՐՈՒՍԵԼՈՑ ՅԻՄԱՐՈՒԹԻՒՆ

Այն վերնագրով, Խրիմեան Հայրիկի աշխատասիրութեամբ և Կիւմիւշկերտանեան Մեծ. Ռուբէն Էֆէնտիի բարեպաշտական սատարութեամբ փոքրիկ մատեան մի հրատարակուած է, որ ընթերցող Քրիստոնէի սիրտն կը վառէ երկնաւոր սիրով, Յիսուսի սիրով, խաչի սիրով, արդարութեան սիրով, Ճշմարտութեան սիրով, եղբայրութեան սիրով: Այն երկասիրութիւնն ո՛չ ցամաք վարդապետական է և ո՛չ մեկնողական, այլ յորդորական, այլ ներբողական, յորում զմայլմամբ և խանդաղատանօք կը հռչակուի Յիսուսի Քրիստոսի անհուն մարդասիրութիւնն, աստուածային սիրոյ անխնայողի զոհն, Խաչի անճառելի ճառն ու իմաստութիւնն, որ յիմարութիւն է կորուսելոց:

Այն երկասիրութեան վերայ համառօտ գաղափար տալու համար՝ արժան կը համարիմք յառաջաբանն հրատարակել Միօնի միջոցաւ, յորդորելով մեր ընթերցողներն, որ աշխատին նոյն իսկ երկասիրութիւնն ձեռք բերել կարդալ և քրիստոնէական սիրով լնանիլ:

ՅՈՐԴՈՐ

ԱՌ ԻՄ ՊԱՇՏՕՆԱԿԻՑ ԵՂԲԱՐՍ ԵՒ ԽԱՉԱԿԻՐ ՈՒԽՏՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ՅԻՍՈՒՍԻ Խաչին ճառը Ձեզ համար գրեցի եւ Ձեզ կը նուիրեմ, ո՛վ Խաչին զինուորներ, Աւետարանի պաշտօնեայներ, կենաց բան քարոզողներ եւ Քրիստոսի հօտին հովիւներ. դուք եթէ սիրով կը գրկէք Յիսուսի Խաչը և ախորժանօք կ'ընթեռնուք իմ Խաչին ճառը. ո՜ն ուրեմն, հոգւով հետ ինձ եկէք, երթանք ելնենք Միօնի վերնատուն. ուր Աւետարանին ուսուցիչ երկնից Վարդապետն կը խոնարհի մինչեւ աշակերտաց ոտքը, կենդանի եւ գործնական օրինակ կ'աւանդէ մեզ և կ'ասէ. “ Օրինակ մի ետու ձեզ. զի և դուք զնոյն առնիջիք ”:

Ո՜հ, քանի՞ մեղապարտ եմք այս օրինակին առաջ երբ կը բարձրամտիմք, երբ փառասիրութեան ախտով կախտանամք. Թողումք Յիսուսին չափ խոնարհիլ և ընկերին ոտքը լուանալ՝ մեք զմեր ընկեր կ'ոտնհարեմք և կը ջանամք տիրելով ստրկացուցանել Աւետարանի ազատ պաշտօնեայները:

Մտիկ արէք, ո՛վ դուք, սէր քարոզող վարդապետներ, Սէրն զսէր կաւանդէ, երկնախօս վարժապետ սիրոյ

digitised by A.R.A.R.@